

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ի 31 դեկտ. 1843 ամի
Յաւերակս Կաղանայ:

Պատուական հօր Եփրեմայ իմաստուն վարդապետի
ի Ս. Նազարեանց խնդալ և ուրախ լինիլ:

Վաղ ուրեմն տկնկառոյց սպասելով պատասխանեաց ի-
մոց նամակաց՝ ընդ ժամանակս ժամանակս առ Ձեզ ուղղե-
լոց, այն է, ի Մոսկովայ և ի Կաղանայ՝ սակաւ մի ևս և
անկանէի յերկուանս զձերոյ բարեկամութենէ: Արդոյ նա-
մակ ձեր՝ գրեալ ի նոյեմբերի 15, ժամանեաց առ իս ի
վերջին օր նոյն իսկ ամսոյ և փարատեաց զոր յիսն տարա-
կուսանս. և ոչ այսչափ միայն. այլև ուրախացոյց զիս ի
հանդէս ածելով զբարեկամիդ մտադիւր պատրաստականու-
թիւն ձեռն տալ ինձ ի պսակ կատարման առաջադրելոյս
գործոյ: Յանկութիւն Հայկազնէից՝ տեսնել զանուանս իւ-
րեանց նազաբանեալ ի գործ ինչ ուսումնական՝ յորոյ ի սպա-
գրութիւն մի և կէս դահեկանաւ արծաթի զոհարբեր լինէին,
երեխայական ինձ տեսնիլ և ակնյայտի սպացոյց մտախա-
սէր բարուց մերայնոց. շատ էր արդարև օգուտն քաղեալ ի վար-
դապետական ինչ ստեղծուածոյ և առանց հաճելոյ զքիմս փա-
ռասիրութեան. Հայք փոխանակ սիրելոյ և փառաւորելոյ
զորս թափեն զամենայն ձիգն իւրեանց ի կրթութիւն ազգի,
ինքեանք կամին գովաբանիլ վասն քանի մի չնչին դահեկա-
նաց՝ ծախելոց յիւրեանց իսկ օգուտ և ի շահ. ո՛հ անդար-
մանելի մոլորութեանդ՝ զորոյ զնմանն առ լուսաւոր ազինս
չիք նշմարել: Եղիցուք ընդ տկարս՝ տկար յանուն ազգե-
մերոյ և առ ի սրտէս տենչանաց օգտել նմա ըստ չափու-
մերոց կարեաց: Շարագրութիւն իմ՝ որոյ առարկայ յայտնի
է ձեզ արդէն, իսկ և իսկ ի տիպ ունի մուծանիլ, եթէ գու-
մարեսցի կարևորեալն առ այդ արծաթ. առ ի սպել օրե-
նակս 300 ի Հայոց սպարանի Ղազանու, պահանջին 600
ուռբլի թղթադրամ. իսկ եթէ սպեսցուք օրինակս հարիւր,
հարկաւորեսցի աւելի քան զ200 ուռբլի թուղթ: Եթէ կամ
էր ազգասիրաց հայոց (եթէ էին արդեօք այսպիսիք առ մեզ)

օգտել անձանց և ոչ ինձ՝ թող միաբանեալ օգնեսցեն ապագրութեան ազգաշահ մատենիս. և ես կատարեցեց զցանկութիւն նոցա նազաբանութեամբ պատուասիրելով զանուանս ի նախերգանս և դասելոյ ի վերջ մատենիս: Բանք պատուական կաթուղիկոսիդ՝ իբրու թէ յանյարմար պահու ձեռնարկեալ է իմ ի գործ պատմագրական ի վարդապետութիւն ազգիս, օտարոտի ինձ թուեցան. կարծեմ թէ՛ բարևոք ևս լինէր՝ ոչ երբէք ձեռն յայդպիսի արկանել և թողուլ ազգի և եկեղեցւոյ մերոյ ի յաւիտեանս դեգերիլ ի բաւիղ խաւարի. Վսէր կարողացուցե՛ ասելով՝ չեղիցի ինչ, պարտ է ձեռն կարկառել օգնութեան և բաջալերել զաշխատողս ի վերայ լուսաւորութեան ազգի. որ մեծն է բան զամենեանս, նա եղիցի և սացե՛ բարի օրինակ այլոց: Հնորհաւորական բանահիւստութիւն իմ և թուղթ՝ ասէք՝ հասեալ են առ վեհափառ ծերունիդ. գիտեմ զայդ և ի նամակ պարոնայ Աժամանց և ոչինչ ևս այլ: Եթէ ոչ խաբիմ, չիք ինձ յղոս ըսպասելոյ արժանւոյն պատասխանելոյ. զի անհնարին է ինձ տեղի տալ կարծեացն՝ թէ ստիական միտք միջամուտ եղեալ ի մեծամեծ խնդիրս Եւրոպեան դարու մերոյ՝ ունկն մատուցեն առողջ խորհրդոց՝ և ի բաց տարցեն զասիական մոլորութիւնս՝ որ ըստ չափ արմատացեալ ի մեզ՝ զլոյզ ընդ կենաց ունին ելանել: Ցացէ՛ տէր, զի պատուական կաթուղիկոսդ ի սուս հանիցէ զախուր գուշակութիւն տառապեալ սրտի իմոյ և ցուցցէ ինձ վկայութեամբ՝ թէ արժան էր զինքենէ այլազգ դատիլ: Չհաստատել կաթուղիկոսիդ ի կյսսերէ վաղու ևս տեսի ի նկարագրութենէ ծիսից և արարողութեանց կատարելոց ի ծերակուտին Էջմիածնի վասն ընտրութեան ներսիսի, ի նկարագրութենէ ասեմ՝ տպելոյ ի Ռուս լեզու յօրագրութեան նախարարութեան ներքին գործոց (журналъ Министерства внутреннихъ дѣлъ): Ցրտումեմ յոյժ՝ մալով ցարդ անպատասխանի ի պարոն Քրիստափորայ Լազարեանց առ որ ի ձեռն Մարկոսեան հայազին յուզարկեցի ճառ ինչ ի ռուս լեզու՝ ուր բան է զբարևոքն անօրէնութենէ դպրոցի նոցա, և զայլոց կարի ազգօգուս

Ստացայ բայց զի՛նչ յայանի ապացոյց գեղեցիկ ասիւք անհետ առնելոյ զամենայն խորհուրդս իմ:

իրողութեանց: Եթէ ասացեալ աղգասէրքս մեր այսչափ սառն և անփոյթ զհայրենեաց, զինչ եղիցին չաղկասէրքն մեր, .յ՛. ճիւղաբ անհեթեթք, կամ անասունք մարդակերպք և կամ մարդիկ անասնակերպք, յորոց պահեսցէ՛ տեր զձեզ և զիս: Ձմտուն կամին բերել տալ վասն վարժապետութեան ի դպրոցի իւրեանց. այո՛ Մտուր զո՞ն շատացուցեն որով և իցէ, բայց մի մտուր ոչ զօրէ տակաւին յերկինս հանել զդպրոց դոցա՛ որոյ պէտք և գլուխք են հայատեացք և ագէտք յայնոսիկ որք հային ի մեր օգուտ ազգային: Շատ էր հայոց մեալ անդ ուր կայինն. և չէր պիտոյ դալ և մտանել ընդ ծառայութեամբ օտարաց՝ կարգելոց պետ և գլխաւոր ի տան պաճարամիտ աղգասիրաց Հայոց: Ձոր ասեմս՝ հասկանայք կարծեմ, և առանց բաղմաց ծանօթաբանութեանց:

Զկեցութենէ մերմէ ի Վաղան դոր ինչ ասացի յառաջին նամակս իմ առ ձեզ, երկրորդեցից և այժմ. վատ է և անյարմար կեանք մեր աստանօր. տառապանք անբաւք և մխիթարութիւն և ոչ մի. հարուստք ապրին տանելի եղանակաւ, բայց վա՛յ և աւա՛ղ արտասուելի աղքատաց՝ յորոց սակի և մեք եմք. օթեւան իմ բաղկացեալ յերկից փոքրիկ և անպիտան սենեկաց արժէ յամին 500 ռուբլի թուղթք, ծառայք իմ թուով երկուք՝ յորոց մին կին մարդ՝ խահարար, ստանան յինէն վարձ ռուբլիս իբր 250. և դու հաշուեմ արդէն զայլ պիտոյս կենաց, յաշնան և ի գարնան յայնպիսի տիղմ ընկղմին փողոցք՝ մինչև անմարթ լինել անցանել ոտիւք. վա՛յ նմա՛ որոյ չեն սայլ և երիվար:

Ահա՛ բեզ վարձ պատուական զկնի սյն սեւա և անիծեալ աւուրց կենաց իմոց ի Բետերբուրք. տա՛ր և համբեր սիրտ իմ եթէ կարես, մինչև եկեալ մահու՛ վաղճանեսցէ զարիւնոտ վիշտս քո, կամ յերանութիւն և կամ ի տանջանս զքեզ դատապարտելով:

Թէ զինչ են միտք կաթողիկոսիդ՝ յորժամ անդրէն դարձցի յԵջմիածին, և ոչ մի ինչ գրէք ինձ. է՛ր արդեօք բանալ դմա ճեմարան ինչ ի կրթութիւն հօգևորաց և ուստի՞ կամ էր առնուլ զառ այդ արժանաւոր վարդապետս, ուսեալս Եւրոպեան և Ասիացի գրովք: Բազում ինչ խօսեցայ զայսպիսեաց ի նամակի իմում առ նա, ցուցանելով և զիմ

առ ձեռն պարաստականութիւն զօրավիգն լինել նմա՝ որով
և բերէին կարբ իմ։ Բայց ցայսօր անպատասխանի մնալս իմ
արկանէ զիս յանել խորխորատ տարակուսանաց։

Առ այժմս պարապելով բարւոք ևս մշակութեան ճառի
ինչ՝ խօսեցելոյ յինէն ի հանդիսի պրօֆեսսօրաց համալսա-
րանիս զգարութենէ Հայոց, գուցէ ընդհուպ յաջողեցայց ի
լոյս արձանացուցանել զայն ի ուսս լեզու, նուիրմամբ վե-
հաստ կաթուղիկոսի մերոյ. մեռեալ է սիրտ իմ. թէև ըս-
կստնիմ արիական հոգւով. այլ պաղեալ եռանդեանն ի կէս
ասպարիսին՝ գօսացուցանէ զձիգն իմ և նահանջէ զյաջողու-
թեամբ կատարածն, ուստի սկզբունք անթիւք և անհամարք,
իսկ վախճան և ոչ մի.

Հանդերձ ողջունիւ իմոյ ցաւած ամուսնոյ առ հայրդ
իմ և բարեկամ

Կամ և մեամ

Ձեր հարազատ

Ս. Նազարեանց։

Մ Ի Դ Ա Շ Ն

Առմաւ Հօր և հաճութեամբ Որդւոյ, և յօժարութեամբ
Սրբոյ Հոգւոյն, մեր ի Թիֆլիզ եղեալ, երկուց թէմից սրբոց եկե-
ղեցեաց գործակալքս և Աւագ Քահանայքս, ի մի սիրտ և ի մի
հոգի եղեալ. զայս թուղթս միաբանութեան եղաք, ի միջի
մերում դաշինս կուելով առաջի Աստուծոյ, և ամենայն սըր-
բոց նորա, զի յայսմհետէ լիցուք ամենեքեան միաբան և
միախորհուրդ, և ըստ ամենայնի կապեալ ի կողմանէ կանո-
նաց, և խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ մերոյ. Եւ որ ինչ հասի
և չհասի քննութիւն և հարցումն իցէ, ամենայն միաբան
բահանայ պարտ է ազգել Աւագ քահանային իւրոյ, և Աւագ
քահանայն յայանել ժողովոյս մերում, և մեր հանդերձ Ա-
ռաջնորդովք մերովք, ըստ կանոնաց քննեալ վերահասու լի-
ցուք, և յայնժամ որ ինչ վճիռ ելցէ, ի ժողովոյս մերմէ,
այնպէս պարտին առնել նաև՝ ի ձեռնադրել քահանայի.